ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 ապրիլի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

52
(3261)

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԵՎԱԼ

2026 թվականի մարտի 29-ին Նիկոլ Փաշինյանի՝ թիմակիցների հետ Սուրբ Աննա եկեղեցի կատարած այցը, որն ուղեկցվեց միջադեպով, մինչ օրս վարչական հսկողության տակ է: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ՊՊԾ-ում ծառայողական քննություն է սկսվել:

Հիշեցնենք, որ երբ Նիկոլ Փաշինյանը թիկնազորի ուղեկցությամբ մտել էր Ս. Աննա եկեղեցի Ծաղկազարդի պատարագի ժամանակ, անվտանգության աշխատակիցները փորձել էին սահմանափակել հավատացյալների տեղաշարժը՝ պահանջելով հետ քաշվել: Սա դժգոհություն էր առաջացրել մի խումբ երիտասարդների շրջանում, ինչի արդյունքում սկսվել էր հրմշտոց անվտանգության ծառայողների եւ քաղաքացիների միջեւ:

Դեպքից հետո եկեղեցու բակում ձերբակալվել էին երեք երիտասարդներ՝ 18-ամյա եղբայրներ Դավիթ Մինասյանը եւ Միքայել Մինասյանը, ինչպես նաեւ Գեւորգ Գեւորգյանը: Վերջինս հայտարարել էր, որ իրեն բերման են ենթարկել վարչապետի «աչքերի մեջ նայելու» համար:

Հետո հրապարակվեց տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես է վարչապետի անվտանգության աշխատակիցներից մեկը հարվածում երիտասարդին հենց եկեղեցու տարածքում: Տեսանյութը կասկածի տակ է դնում այն վարկածը, թե երիտասարդը հարձակման մտադրություն է ունեցել:

Այս էմոցիոնալ ու անարդար իրավական գործընթացներից հետո հասարակական քննարկումների կենտրոնում է հայտնվել նաեւ անվտանգության աշխատակիցներից մեկը՝ Արտյուշ անունով ծառայողը, որի գործողությունները քննության առարկա են դարձել: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների՝ ՊՊԾ համակարգում նշանակվել է ծառայողական քննություն՝ միջադեպի հանգամանքները պարզելու նպատակով: Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ քննության ընթացքում որոշում է կայացվել, որ տվյալ աշխատակիցը ժամանակավորապես ներկա չի գտնվի հանրային միջոցառումներին՝ հաշվի առնելով միջադեպի շուրջ ձեւավորված հանրային արձագանքը: Նա նեգատիվ է առաջացնում:

Առողջապահության ազգային ինստիտուտը շարունակում է առանցքային դեր ունենալ առողջապահության համակարգի քաղաքականությունների մշակման եւ կիրառման գործընթացում՝ կենտրոնացնելով կարեւոր որոշումների ընդունման լծակներ: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները ներառում են բժշկական կլինիկական ուղեցույցների եւ չափորոշիչների մշակում, դրանց ներդրման եւ վերահսկման մեխանիզմների ձեւավորում, ինչպես նաեւ համակարգի արդյունավետության գնահատման նպատակով տվյալների հավաքագրում եւ ազգային զեկույցների պատրաստում: Բացի այդ, կառույցը պատասխանատու է նաեւ առողջապահական կադրային ներուժի վերաբերյալ տվյալների բազայի ձեւավորման համար: Կառույցը ղեկավարում է Ալեքսանդր Բազարչյանը, ով առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանի հետ համարվում է ոլորտում ազդեցիկ որոշում կայացնողներից: Երկուսն էլ դիտարկվում են որպես նախկին նախարար Արսեն Թորոսյանի ձեւավորած թիմի ներկայացուցիչներ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ կառավարությունը միլիարդներ է ներդրել սահմանամերձ բնակավայրերում տուն կառուցելու համար, բայց չի հաշվարկել՝ այդ տներում իրականում ով է ապրում: «Ժողովուրդ»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս՝ 35 մլրդ դրամ վարկերի եւ 6.8 մլրդ դրամ բյուջետային աջակցության դիմաց պետությունը դեռ չգիտի՝ սահմանին քանի մարդ է բնակեցվել: Թվերը կան, բնակեցման արդյունքը՝ ոչ: Խոսքը «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության» այն ծրագրի մասին է, որի շրջանակում քաղաքացիներին տրամադրվում է մինչեւ 16 մլն դրամ աջակցություն՝ սահմանամերձ բնակավայրերում բնակելի տուն կառուցելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղղել կառավարությանը՝ պահանջելով հստակ տվյալներ՝ քանի մարդ է դիմել, քանիսն են դարձել շահառու, որքան գումար է հատկացվել, որ մարզերում եւ որ բնակավայրերում են կառուցվել տներ, եւ, ամենակարեւորը, այդ տներից քանիսն են բնակեցված:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Անցած տարվա դեկտեմբերի 18-ի նիստում Հայաստանի կառավարությունը նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա 477 մլն դրամ հատկացրեց: Ծրագրով նախատեսվում է հողային եւ քանդման աշխատանքներ, հին նստարանների ու աղբամանների փոխարինում, բազալտե եւ տուֆե սալիկների տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում, ինչպես նաեւ կանաչ գոտիների ընդլայնում եւ ոռոգման ցանցի անցկացում: Սակայն ArmLur.am-ի նկարահանող խումբը արձանագրել է մի շարք թերություններ կատարված աշխատանքներում: Մասնավորապես, ArmLur.am-ը արձանագրել է, որ շինարարներն արդեն չկան, սակայն ակնհայտ է, որ իրականացված աշխատանքները լիովին չեն համապատասխանում հայտարարված չափանիշներին: Արձանագրվել են ծառերի դատարկ բնաբաժակներ, որոնք փաստացի չեն ծառայել կանաչ գոտիների ընդլայնմանը: Բացի այդ, կանաչ գոտու ընդլայնում ընդհանրապես չկա որեւէ տեղ: Որոշ հատվածներում նկատվում են նաեւ տուֆե սալիկների անավարտ եզրեր, իսկ նախագծով նախատեսված բազալտե սալերի փոխարեն տեղադրված են միայն եզրաքարեր. բազալտե նոր սալեր չկան մայթերին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՄՏՆԵԼՆ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻՋՈՑ է»

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրը, ArmLur.am-ը զրուցեց «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանի հետ:

- Նախ՝ անդրադառնանք օրվա խորհրդին: Ի՞նչ խորհուրդ ունի այն Ձեզ համար:

- Այս օրը պետք է մեզ համար լինի ոչ միայն սուգի եւ հիշողության օր, այլ նաեւ խորքային վերաիմաստավորման եւ վերարժեւորման հնարավորություն: Մենք պարտավոր ենք մշտապես հիշել տեղի ունեցած ոճրագործությունը, բայց միաժամանակ այն վերածել ուժի եւ կամքի խորհրդանիշի՝ կառուցելու կենսունակ, իրական հայկական պետություն: Սա պետք է օգնի դուրս գալ «խեղճի» կարգավիճակից եւ ձեւավորել այնպիսի պետություն, որը այլեւս թույլ չի տա նման ողբերգությունների կրկնություն:

- Հանրապետության հրապարակում տեղի ունեցած դեպքին՝ Թուրքիայի դրոշի այրմանը, իշխանությունները արձագանքեցին՝ այն որակելով որպես ամոթալի քայլ: Դուք ինչպե՞ս եք գնահատում:

- Ես անձամբ նման ակցիաներին երբեք մեծ նշանակություն չեմ տվել եւ դրանցում բովանդակային արժեք չեմ տեսնում: Եթե ինչ-որ մարդիկ փորձում են դրա մեջ սիմվոլիկ իմաստ գտնել, դա իրենց ընտրությունն է: Սակայն, իմ համոզմամբ, թշնամի պետության նկատմամբ վերաբերմունքը պետք է ձեւավորվի կրթության, գիտության, մշակույթի միջոցով: Ամենակարեւորը՝ մենք պետք է զարգանանք եւ հզորանանք, ոչ թե սահմանափակվենք խորհրդանշական, բայց բովանդակություն չունեցող գործողություններով:

- Մասնակցելո՞ւ եք առաջիկա ընտրություններին: Ի՞նչ ակնկալիքներ ունեք:

- Այո՛, բնականաբար մասնակցելու ենք: Մեր նվազագույն նպատակը խորհրդարանում ներկայացված լինելն է, որպեսզի կարողանանք ճեղքել այս «փոխհամաձայնեցված իշխանության» համակարգը եւ ձեւավորել նոր օրակարգ: Սա պետք է դառնա հայկական իրական պետության ձեւավորման մեկնակետը:

- Իսկ եթե հաջողություն չգրանցեք, ո՞ր ուժին եք պատրաստ աջակցել:

- Ես բազմիցս նշել եմ, որ ներկայիս քաղաքական համակարգում գործող բոլոր ուժերը որակապես նույն հարթության մեջ են: Այդ պատճառով էլ խոսվում է «փոխհամաձայնեցված իշխանության» մասին: Այս պայմաններում որեւէ մեկին աջակցելը մեր մոտեցումը չէ:

- Կարծիք կա, որ փոքր ուժերի մասնակցությունը հանգեցնում է ձայների փոշիացման: Ինչպե՞ս եք գնահատում դա:

- «Ձայների փոշիացման» մասին խոսույթը, իմ կարծիքով, կեղծ օրակարգ է: Եթե ընդդիմադիր ուժերը իսկապես ունեն 51%+, ապա նրանք պետք է ողջունեն յուրաքանչյուր նոր մասնակցի: Քաղաքական գործընթացը միայն ձայների մասին չէ. այն գաղափարների, օրակարգերի եւ խորքային փոփոխությունների մասին է: Մեր նպատակը ոչ միայն խորհրդարանում լինելն է, այլեւ նոր գաղափարական հարթություն ձեւավորելը եւ մարդկանց համախմբելը այդ օրակարգի շուրջ:

- Այսինքն՝ Ձեր հիմնական նպատակը գաղափարական փոփոխությո՞ւնն է:

- Այո՛: Խորհրդարան մտնելը ընդամենը միջոց է: Մեր իրական նպատակը նոր օրակարգ ձեւավորելն է, որը կօգնի դուրս գալ ներկայիս փակուղուց եւ սկսել իրական փոփոխություններ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՎԱՐՏՎԵԼ Է

Ավարտվել է Փարիզում «Մեծ յոթնյակի» (G7) շրջակա միջավայրի նախարարների հանդիպմանը ՇՄ նախարար Համբարձում Մաթեւոսյանի մասնակցությունը, որը կարեւոր հանգրվան էր Հայաստանի միջազգային բնապահպանական ներգրավվածության խորացման տեսանկյունից: Այդ մասին տեղեկանում ենք նախարարի Ֆեյսբուքի էջից:

«Այս ձեւաչափում Հայաստանի ներկայությունը ոչ միայն վկայում է մեր երկրի նկատմամբ աճող վստահության մասին, այլեւ ընդգծում է մեր դերակատարության բարձրացումը գլոբալ բնապահպանական օրակարգում:

G7-ը համախմբում է համաշխարհային քաղաքական եւ տնտեսական գործընթացների առանցքային դերակատարներին, եւ այս հարթակում մեր մասնակցությունը հնարավորություն տվեց ներկայացնելու Հայաստանի առաջնահերթությունները եւ նպաստելու դրանց շուրջ միջազգային քննարկումների ձեւավորմանը:

Մեր երկրի մասնակցությունն առանձնահատուկ նշանակություն ուներ նաեւ այն առումով, որ Հայաստանը հանդիսանում է ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովի՝ COP17-ի առաջիկա հյուրընկալող երկիր: Այս հանգամանքը մեր առջեւ դնում է բարձր պատասխանատվություն՝ ակտիվորեն ներգրավվելու միջազգային գործընթացներում, ամրապնդելու գործընկերային կապերը եւ ձեւավորելու համախմբված մոտեցումներ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը եւ կլիմայական մարտահրավերների հաղթահարմանը:

Հանդիպումների ընթացքում վերահաստատեցի Հայաստանի պատրաստակամությունը՝ հանդես գալու որպես նախաձեռնող եւ վստահելի գործընկեր, ինչպես նաեւ ներկայացրեցի մեր առաջնահերթությունները՝ Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի արդյունավետ իրականացման ապահովման եւ բազմակողմ գործընթացների միջեւ փոխգործակցության ուժեղացման համատեքստում:

Համոզված եմ, որ այս հանդիպման շրջանակում ձեւավորված համագործակցությունները եւ ձեռք բերված պայմանավորվածությունները էական ներդրում կունենան ինչպես COP17-ի հաջող կազմակերպման, այնպես էլ դրա արդյունքների երկարաժամկետ ազդեցության ապահովման գործում»,- նշված է գրառման մեջ:

1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՑՈՒՆԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի եւ վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 459 միլիարդ 270 միլիոն դրամ: Պետական բյուջե է մուտքագրվել նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի 49 միլիարդ 916 միլիոն դրամ. նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է ավելի քան 409 միլիարդ 353 միլիոն դրամ:

Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 380 միլիարդ 334 միլիոն դրամ, իսկ Մաքսային մարմին կատարված վճարումների գումարը՝ ավելի քան 78 միլիարդ 935 միլիոն դրամ:

1,000 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ ցանկը հասանելի է ՊԵԿ պաշտոնական կայքի «Տեղեկություն հարկ վճարողների վերաբերյալ» բաժնի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր» ենթաբաժնում:

Առաջին հնգյակում հետեւյալ ընկերություններն են՝

- ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ
- ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ
- ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ
- ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ
- ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ

ԼՈՒՐՋ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԵՋ է

Միավորված Ազգերի Կազմակերպությունը գտնվում է լուրջ ճգնաժամի մեջ, հայտարարել է Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Թաալաթբեկ Մասադիկովը:

«Այսօր գլոբալ աշխարհաքաղաքական իրավիճակը շատ բարդ եւ անկայուն է: Միջազգային իրավունքը չի գործում, կամ, ավելի ճշգրիտ, միշտ չէ, որ գործում է: ՄԱԿ-ը լուրջ ճգնաժամ է ապրում», - լրագրողներին ասել է նա:

Մասադիկովը վստահ է, որ աշխարհի խնդիրների լուծումները «կարելի է գտնել միայն երկխոսության միջոցով»: Նա նշել է, որ «Հավաքական Անվտանգության Նոր Ճարտարապետության Կոնտուրները. ՀԱՊԿ Տեղեկատվական եւ Անալիտիկ Գործընկերության Արդիական Խնդիրները» միջազգային գիտական եւ գործնական համաժողովը ծառայում է այս նպատակին:

«Մենք փորձում ենք ոչ միայն ստեղծել երկխոսության հարթակ, այլեւ օգնել վերաբացել այն հարթակները, որոնք դադարեցրել են գործել», - նշել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Չինաստանը եւ Վրաստանը համաձայնության են եկել արդիականացնել երկու երկրների միջեւ գործող ազատ առեւտրի համաձայնագիրը, որը ուժի մեջ է արդեն ութ տարի: Համապատասխան հուշագիրը ապրիլի 22-ին Պեկինում ստորագրել են Չինաստանի առեւտրի նախարար Վան Վենտաոն եւ Վրաստանի էկոնոմիկայի նախարար Մարիամ Կվրիվիշվիլին:

Վրաստանի էկոնոմիկայի նախարարության փոխանցմամբ՝ համաձայնագրի նորացված տարբերակը նպատակ ունի ավելի ամրապնդել եւ խորացնել երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունները:

Ի՞նչ է փոխվել համաձայնագրում

Չինական կողմի տվյալներով՝ նոր տարբերակում ավելացվել են երկու նոր բաժիններ՝ ներդրումների եւ էլեկտրոնային առեւտրի վերաբերյալ:

Բացի այդ, վերանայվել են նաեւ՝

սանիտարական եւ ֆիտոսանիտարական նորմերին վերաբերող դրույթները,

տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ գլուխները:

Ներդրումների ոլորտում կողմերը պայմանավորվել են ապահովել ավելի մեծ թափանցիկություն եւ պարզեցնել ներդրումների հաստատման գործընթացները: Էլեկտրոնային առեւտրի շրջանակում նախատեսվում է ժամանակավորապես հրաժարվել թվային գործարքների մաքսատուրքերից, ինչպես նաեւ ապահովել սպառողների իրավունքների եւ անձնական տվյալների պաշտպանությունը:

Միաժամանակ, թարմացված նորմերը նպատակ ունեն նվազեցնել ավելորդ սահմանափակումները եւ արագացնել գյուղատնտեսական արտադրանքի որակի շուրջ առաջացող վեճերի լուծումը:

Ինչո՞ւ է սա կարեւոր

Չինաստանի եւ Վրաստանի միջեւ ազատ առեւտրի համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարին: Այն Չինաստանի առաջին նմանատիպ համաձայնագիրն էր «Մեկ գոտի եւ մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակում, ինչպես նաեւ առաջինը Եվրասիական տարածաշրջանի որեւէ երկրի հետ:

Համաձայնագրի գործողության ընթացքում երկկողմ առեւտուրը զգալի աճ է գրանցել: 2025 թվականի արդյունքներով այն հասել է մոտ 2.7 միլիարդ դոլարի՝ 2017 թվականի համեմատ աճելով շուրջ 175 տոկոսով:

Վրաստանից Չինաստան ակտիվորեն արտահանվում են գինի, սուրճ եւ հանքային ջուր, իսկ Չինաստանից Վրաստան՝ էլեկտրոնիկա եւ թվային ծառայություններ:

Համաձայնագրի արդիականացման շուրջ բանակցությունները սկսվել էին 2025 թվականի հուլիսին: Կողմերը անցկացրել են երկու փուլ բանակցություններ:

2025 թվականի նոյեմբերին Շանհայում բանակցությունների ավարտի մասին հուշագիրը ստորագրվել էր Չինաստանի վարչապետ Լի Ցյանի եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի ներկայությամբ:

Նորացված համաձայնագիրը ուժի մեջ կմտնի կողմերի ներքին վավերացման գործընթացների ավարտից հետո, իսկ վերջնական ժամկետները կհայտարարվեն ավելի ուշ:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

ԻՐԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ Է ՄԵԿՆԵԼ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին ժամանել է Ռուսաստան, որտեղ նախատեսվում է նրա հանդիպումը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Քննարկման հիմնական թեման լինելու են Մերձավոր Արեւելքում շարունակվող հակամարտությունը եւ դրա կարգավորման հնարավոր ուղիները:

Արաղչին հայտարարել է, որ այցի նպատակն է իրականացնել «անհրաժեշտ համակարգում»՝ հատկապես այն պայմաններում, երբ ԱՄՆ-ի հետ բանակցությունները կանգ են առել:

Իրանական պետական լրատվամիջոցներին հղում անելով՝ AFP-ն հայտնում է, որ Արաղչին Ռուսաստանում հայտարարել է՝ ԱՄՆ-ն է պատասխանատու ապրիլի կեսերին Պակիստանում անցկացված բանակցությունների ձախողման համար:

Նրա խոսքով՝ «չնայած որոշակի առաջընթացին, ԱՄՆ-ի մոտեցումները եւ չափազանցված պահանջները հանգեցրին նրան, որ բանակցությունները չհասան իրենց նպատակին»:

Նա նաեւ ընդգծել է, որ Հորմուզի նեղուցով անվտանգ անցումն ունի համաշխարհային նշանակություն: Նեղուցի փաստացի փակումը հակամարտության ընթացքում լուրջ խափանումներ է առաջացրել նավթի եւ գազի համաշխարհային մատակարարումներում:

Արաղչիի այցերը տեղի են ունենում այն պայմաններում, երբ ԱՄՆ-ի հետ բանակցությունները շարունակում են մնալ փակուղում: Երկու կողմերն էլ մերժել են միմյանց մի շարք պահանջներ:

Միեւնույն ժամանակ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը չեղարկել է իր հատուկ ներկայացուցիչների՝ Սթիվ Վիտկոֆի եւ Ջարեդ Քուշների այցը Իսլամաբադ՝ նշելով, որ բանակցությունները «ոչ մի արդյունք չեն տալու»:

Մինչ Ռուսաստան մեկնելը Արաղչին հանդիպումներ է ունեցել Պակիստանի ռազմական ղեկավար Ասիմ Մունիրի, վարչապետ Շեհբազ Շարիֆի եւ ԱԳ նախարար Իշաք Դարի հետ: Նա նաեւ այցելել է Օման, որտեղ քննարկվել է Հորմուզի նեղուցի վերաբացման հարցը:

Չնայած լարվածությանը՝ Իրանի Fars News Agency գործակալությունը հայտնում է, որ շարունակվում են ԱՄՆ-Իրան նոր բանակցությունների նախապատրաստական աշխատանքները: Թեհրանը, միջնորդ Պակիստանի միջոցով, «գրավոր հաղորդագրություններ» է փոխանցել Վաշինգտոնին՝ ներկայացնելով իր «կարմիր գծերը»՝ կապված միջուկային ծրագրի եւ Հորմուզի նեղուցի հետ:

Միաժամանակ Axiosը, հղում անելով իր աղբյուրներին, հայտնում է, որ Իրանը նոր առաջարկ է ներկայացրել՝ նեղուցի վերաբացման եւ պատերազմի դադարեցման վերաբերյալ: Ըստ այդ տեղեկությունների՝ Թեհրանը ցանկանում է միջուկային բանակցությունները տեղափոխել ավելի ուշ փուլ:

Վաշինգտոնը պահանջում է, որ Իրանը դադարեցնի ուրանի հարստացումը՝ պնդելով, որ այն կարող է օգտագործվել միջուկային զենք ստեղծելու համար: Թեհրանը, իր հերթին, շարունակում է հայտարարել, որ իր միջուկային ծրագիրը ունի բացառապես խաղաղ նպատակներ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՈՒՏԻՆԸ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը օրական մի քանի անգամ ստանում է զեկույցներ Ուկրաինայի զինված ուժերի կողմից իրականացվող հարձակումների վերաբերյալ: Այս մասին հայտնում է РИА Новости-ն՝ հղում անելով Կրեմլի պաշտոնական ներկայացուցիչ Դմիտրի Պեսկովին: Պեսկովը նշել է, որ պետության ղեկավարին օրվա ընթացքում մի քանի անգամ փոխանցվում են թարմ տվյալներ, որոնք վերաբերում են ռազմաճակատում տեղի ունեցող գործողություններին: Նրա խոսքով՝ այդ տեղեկատվությունը թույլ է տալիս նախագահին մշտապես տեղեկացված լինել իրավիճակի զարգացման մասին: Կրեմլի ներկայացուցիչը ընդգծել է, որ նման պարբերական զեկուցումները ապահովում են օպերատիվ վերահսկողություն եւ հնարավորություն են տալիս արագ արձագանքել տեղի ունեցող իրադարձություններին:

ՍՈՒԼԹԱՆԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին Օմանի սուլթան Հեյսհամ բին Թարիքի եւ Սուլթանության արտաքին գործերի նախարար Բադր բին Համադ ալ-Բուսաիդիի հետ քննարկել է Պարսից եւ Օմանի ծոցերի անվտանգության հարցերը, ինչպես նաեւ Հորմուզի նեղուցում նավագնացության խնդիրները: «Այս հանդիպմանը, որին մասնակցել է նաեւ Օմանի արտաքին գործերի նախարար Բադր ալ Բուսաիդին, կողմերը քննարկել են Հորմուզի նեղուցում նավարկության անվտանգությանը, Պարսից եւ Օմանի ծոցերի անվտանգությանը, տարածաշրջանի երկրների միջեւ տնտեսական համագործակցությանը, ինչպես նաեւ Պակիստանի միջնորդությամբ պատերազմի ավարտի բանակցություններին վերաբերող հարցեր», - ասվում է Իրանի ԱԳՆ ղեկավարի՝ Telegram-ում հրապարակված հայտարարության մեջ: Կիրակի օրը Օմանի պետական լրատվական գործակալությունն էլ հաղորդել է, որ Օմանի սուլթանը Մասկատ կատարած այցի ընթացքում Իրանի ԱԳ նախարարի հետ քննարկել է տարածաշրջանում հակամարտությունը դադարեցնելու միջնորդների ջանքերը: Արաղչին շնորհակալություն է հայտնել Սուլթանությանը՝ սրվող իրավիճակի դիվանագիտական լուծմանը ցուցաբերած միջնորդության եւ աջակցության համար:

ԶԵԼԵՆՍԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է

Վլադիմիր Զելենսկին Գերագույն ռադային է ներկայացրել օրինագծեր, որոնք Ուկրաինայում ռազմական դրությունը եւ զորահավաքը երկարաձգում են եւս 90 օրով՝ ուժի մեջ մտնելով մայիսի 4-ից: Համապատասխան փաստաթղթերը տեղադրված են Ուկրաինայի խորհրդարանի կայքում: Փաստաթղթերը ներկայացվել են համապատասխան հանձնաժողովի քննարկմանը, որից հետո նախատեսվում է խորհրդարանի կողմից ընդհանուր քվեարկության համար: Ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք հայտարարվել են Ուկրաինայում 2022 թվականի փետրվարի 24-ին: Սա այս միջոցառումների 19-րդ երկարաձգումն է: Ռազմական դրության եւ զորահավաքի շարունակական երկարաձգման պատճառով Ուկրաինայում խորհրդարանական, նախագահական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն անցկացվել: Զելենսկիի նախագահական ժամկետը պաշտոնապես լրացել է 2024 թվականի մայիսի 20-ին:

ԵՐԿՕՐՅԱ ՍՈՒԳ

Մալիի իշխանությունները երկօրյա սուգ են հայտարարել պաշտպանության նախարար Սադիո Կամարայի ահաբեկչական հարձակումների հետեւանքով զոհվելու կապակցությամբ, ըստ կառավարության խոսնակ Իսա Ուսման Կուլիբալիի: «Երկրի ողջ տարածքում երկօրյա սուգ է հայտարարվել ապրիլի 27-ին, ժամը 00:00-ից (Մոսկվայի ժամանակով 03:00) սկսած՝ի հիշատակ պետական նախարար, պաշտպանության նախարար եւ վետերանների հարցերով նախարար գեներալ Սադիո Կամարայի», - ասել է նա՝ ելույթ ունենալով ORTM ազգային ռադիոկայանում: Ըստ Կուլիբալիի, սգո ժամանակահատվածում բոլոր հասարակական շենքերի եւ հաստատությունների դրոշները կիջեցվեն:

Ապրիլի 25-ին արմատական աշխարհազորայինները համակարգված հարձակումներ են սկսել Մալիի մի քանի քաղաքների վրա: Պաշտպանության եւ վետերանների հարցերով նախարար Սադիո Կամարան սպանվել է: Մալիի զինված ուժերի գլխավոր շտաբը նույն օրը հայտնել է, որ բոլոր զինյալների հարձակումները հետ են մղվել, եւ որ դրանք զգալի վնասներ են կրել: Մարտերը շարունակվել են ապրիլի 26-ին, հիմնականում երկրի հյուսիս-արեւելքում գտնվող Կիդալ քաղաքում, ինչպես նաեւ Գաո եւ Սեւարե քաղաքներին հարակից տարածքներում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԿԱԼԱՆԱՎՈՐԻ ՆԱՄԱԿԸ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

ArmLur.am-ը գրուցել է ՊՆ նախկին փոխնախարար Վահրամ Խորխոռունու սպանության գործով կալանավորված Հրայր Նարիմանյանի փաստաբան Ռաֆայել Մարտիրոսյանի հետ:

Հիշեցնենք, որ երեկ ՀՀ գլխավոր դատախազությունը մանրամասներ է հայտնել 28 տարի առաջ սպանված Հայաստանի պաշտպանության նախկին փոխնախարար Վահրամ Խորխոռունու սպանության գործով Ռուսաստանի Դաշնությունում կալանավորվածի վերաբերյալ:

Հայտնել էինք, որ սպանության գործով անցնող Հրայր Նարիմանյանին ՌԴ իրավապահները կալանավորել էին:

«2025 թվականի նոյեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազություն է ուղարկվել քրեական վարույթով հետախուզվող Հրայր Համլետի Նարիմանյանին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդություն:

Միջնորդության հիման վրա ՌԴ գլխավոր դատախազությունը ՌԴ իրավասու մարմիններին հանձնարարել է հայտնաբերել եւ ձերբակալել Հ. Նարիմանյանին:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի 2026 թվականի մարտի 5-ի տեղեկության համաձայն՝ Հ. Նարիմանյանը 2026 թվականի մարտի 4-ին ձերբակալվել է ՌԴ իրավապահ մարմինների կողմից:

2026 թվականի մարտի 6-ին ՌԴ գլխավոր դատախազություն է ուղարկվել Հ. Նարիմանյանի հանձնման միջնորդությունը վերահաստատելու վերաբերյալ գրություն՝ միաժամանակ խնդրելով կալանավորել վերջինիս եւ անդրադառնալ նրան հանձնելու մասին միջնորդության քննարկմանը:

Միջնորդության քննարկման արդյունքների մասին տեղեկություն դեռեւս ՀՀ գլխավոր դատախազությունում չի ստացվել»:

Հիշեցնենք, որ 2025 թվականի հուլիսի 25-ին ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ բացահայտվել է Հայաստանի պաշտպանության նախկին փոխնախարար Վահրամ Խորխոռունու սպանությունը: Ըստ նախաքննական մարմնի՝ Սասուն Առուշանյանը, Հրայր Նարիմանյանը եւ Արմեն Առաքելյանը 1998 թվականի դեկտեմբերի 10-ին, շահադիտական դրդումներով, Սասուն Առուշանյանի կազմակերպմամբ եւ համակատարմամբ իրականացրել են սպանությունը, ինչպես նաեւ ապօրինի կերպով ձեռք են բերել եւ պահել հրազեն: ՔԿ-ի տվյալներով՝ Սասունը, լինելով զինծառայող, կազմակերպել է սպանությունը եւ 1998 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին այդ նպատակով պայմանավորվել է Լեռնային Ղարաբաղի բնակիչներ Հ.Ն.-ի եւ Ա.Ա.-ի հետ՝ նրանց խոստանալով համապատասխանաբար 10 000 եւ 15 000 դոլար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՆՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱԺ նախկին պատգամավոր Մհեր Սեդրակյանի որդուն՝ Դավիթ Սեդրակյանին պատկանող ընկերության դեմ Գլխավոր դատախազությունը գործընթաց է սկսել: Գլխավոր դատախազությունը դիմել է Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան ընդդեմ «Բիդեք» ՍՊԸ-ի՝ պահանջելով հողամասի կառուցապատման իրավունքի հարկադիր դադարեցում:

2023 թվականին Hetq.am-ը գրել էր, որ ԱԺ նախկին պատգամավորի մանդատը վայր դնելուց հետո Դավիթ Սեդրակյանի գործերն այնքան էլ վատ չեն ընթանում. միայն 2023 թվականի ընթացքում պետական եւ տեղական ինքնակառավարման տարբեր մարմիններ ընդհանուր 1 մլրդ 335 միլիոն դրամի գնում են կատարել Սեդրակյանին պատկանող «Բիդեք» ՍՊԸ-ից: Այդ ընկերության հետ այդ տարվա ընթացքում կնքվել է 4 պայմանագիր, որոնցից 2-ը՝ Երեւանի քաղաքապետարանը, 1-ը՝ Վաղարշապատի համայնքապետարանը, 1-ն էլ՝ ԿԳՄՍ նախարարությունը: «Բիդեք» ՍՊԸ-ն ամենախոշոր պատվերը ստացել է Վաղարշապատի համայնքապետարանից: Մի քանի օր առաջ՝ օգոստոսի 18-ին կնքված պայմանագրի համաձայն՝ Դավիթ Սեդրակյանին պատկանող ընկերությունը 725 միլիոն դրամի դիմաց պարտավորվել է կատարել Էջմիածին քաղաքի թիվ 6 «Արեւիկ» մանկապարտեզի հիմնանորոգման եւ նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի (ԿԳՄՍ) նախարարության հետ կնքած պայմանագրի արժեքն էլ կազմել է 432 միլիոն դրամ, որի դիմաց «Բիդեք» ՍՊԸ-ն պետք է հիմնանորոգի Երեւանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարանը: Այդ պայմանագիրը կնքվել է տարեսկզբին՝ 2023թ. հունվարի 24-ին:

Այս տարվա մյուս երկու պայմանագրերի պատվիրատուն եղել է Երեւանի քաղաքապետարանը: Հունիսի 30-ին կնքված պայմանագրի համաձայն՝ «Բիդեք» ՍՊԸ-ն 120 միլիոն դրամի դիմաց պարտավորվել է բարեկարգել Արաբկիր վարչական շրջանում գտնվող թիվ 23 մանկապարտեզի բակը: Քաղաքապետարանի եւ «Բիդեք» ՍՊԸ-ի միջեւ մարտի 1-ին կնքված պայմանագրով էլ ընկերությունը կատարել է Երեւանի կենդանաբանական այգու էլեկտրական ներքին ցանցի բարելավման աշխատանքներ, որի համար ստացել է 58 մլն դրամ:

Հիշեցնենք՝ նախորդ տարիներին եւս «Բիդեք» ՍՊԸ-ն խոշոր պատվերներ է ստացել պետական տարբեր գերատեսչություններից: Օրինակ՝ 2022 թվականին 2,6 միլիարդ դրամի պայմանագիր էր կնքել Քաղաքաշինության կոմիտեն՝ Երեւանի պետական կոնսերվատորիայի վերանորոգման աշխատանքների համար: Այդ մասին «Հետքը» նախկինում հրապարակումներ է ունեցել:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով՝ «Բիդեք» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2009թ. ապրիլի 15-ին: Մինչեւ 2019թ. ընկերության միակ սեփականատերն ու տնօրենը եղել է Գառնիկ Ավետիսյանը: Վերջինս Դավիթ Սեդրակյանի հոր՝ Ազգային Ժողովի ՀՀԿ-ական նախկին պատգամավոր Մհեր Սեդրակյանի (Թոխմախի Մհեր) ընկերն է: 2019թ. փետրվարի 14-ից Գառնիկ Ավետիսյանն իր բաժնեմասի 75 տոկոսը փոխանցել է Դավիթ Սեդրակյանին, եւ մինչեւ օրս բաժնեմասերի հարաբերակցությունը չի փոխվել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓՈՐՁԵԼ ԵՆ ՆՌՆԱԿ ՊԱՅԹԵՑՆԵԼ

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ «88» սուպերմարկետների սեփականատեր Նարեկ Նալբանդյանին պատկանող Ծաղկաձորի հյուրանոցում 36-ամյա տղամարդը փորձել է նռնակ պայթեցնել, սակայն նրան չի հաջողվել դա իրականացնել, որից հետո ինքնավնասում է արել եւ հյուրանոցի 4-րդ հարկից ցած նետվել:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ ապրիլի 24-ին առեղծվածային մահվան դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 10:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Հրազդանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ծաղկաձոր քաղաքում հայտնի «Էյթի Էյթ Հոթել ընդ Սպա» հյուրանոցային համալիրի բակում դի կա:

Shamshyan.com-ը հայտնեց, որ իրավապահները պարզել են՝ մահացածը Վայոց ձորի մարզի բնակիչ 35-ամյա Աշոտ Խ.-ն է:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԵՆ

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ ապրիլի 19-ին դանակահարության դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 13:50-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Բրյուսով փողոցի 23 հասցեի մոտից շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը «գոտկային շրջանի դանակահարություն, պոլիտրավմա» ախտորոշմամբ «Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխել մի տղամարդու: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ոստիկանության Կենտրոնական բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի պաշտոնակատար Վազգեն Թադեւոսյանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ վիրավորը Երեւանի բնակիչ 59-ամյա Կարեն Ղ.-ն է: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում Երեւանի բնակիչ 50-ամյա Ստեփան Շ.-ն դանակով հարվածել է Կարեն Ղ.-ի ձախ գոտկային հատվածին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Ֆոտոլրագրողի տեղեկություններով Ստեփան Շ.-ն մարմնական վնասվածք հասցնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների կողմից ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Կենտրոնական բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է հանցագործության գործիք հանդիսացող ծալովի դանակը:

Դեպքի փաստով ոստիկանության Կենտրոնական բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք Ստեփան Շ.-ի հետ միասին ներկայացվել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

ԿՎԵՐԱԴԱՐՁՎԵՆ

Գլխավոր դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչությունը 2026 թվականի հունվարի 23-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել «Սեյսմակայուն շինարարության եւ կառուցվածքների պահպանման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲ ընկերության եւ «Ջերմուկ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջեւ 2008 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը եւ կիրառել անվավերության հետեւանքներ: Այս մասին հայտնում են դատախազությունից:

Դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 14-ի վճռով, հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը, որով Հայաստանի Հանրապետությանը կվերադարձվեն Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի 7-րդ շենքի 51,9 քմ ընդհանուր մակերեսով թիվ 97 նկուղային տարածքը եւ 0,082262 հա մակերեսով հողամասը:

● *Ապրիլի 20-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 387 ոչ սթափ վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 29 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ

Ապրիլի 17-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել. «Ապրիլի 17-ի դրությամբ որքա՞ն պարգեւավճար են ստացել Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատողները: 2. Ապրիլի 17-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում մարզի կարիքավորներից դրամական աջակցության քանի՞ դիմում է ստացվել, դրանցից քանի՞սն է բավարարվել, ընդհանուր որքա՞ն դրամական օգնություն է տրվել մարզի կարիքավորներին»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Ապրիլի 17-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ՀՀ կառավարության 20.10.2011թ. թիվ 1510-Ն եւ թիվ 1712-Լ որոշումներով սահմանված կարգի համաձայն՝ ստացել են 29 155,4 հազար դրամի պարգեւավճարներ: 2026 թվականի ապրիլի 17-ի դրությամբ դրամական օգնություն է տրվել 125 ընտանիքի՝ ընդհանուր 6 միլիոն 345 հազար դրամ գումարի չափով»:

Փաշինյանի իշխանության տարիներին մեծ չափով կրճատվել է պետբյուջեից դրամական օգնություն ստացած քաղաքացիների թիվը, դրամական օգնության չափը: Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2022 թ.-ին դրամական օգնության համար Տավուշի մարզպետարան է դիմել 1751 քաղաքացի, օգնության նպատակով տրամադրված ընդհանուր գումարի չափը եղել է 79 միլիոն 10 հազար դրամ:

Տավուշի մարզպետն անտեսել է այն հարցը, թե ապրիլի 17-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում մարզի կարիքավորներից դրամական աջակցության քանի դիմում է ստացվել: Հարցն անտեսելը պատահական չէ, քանի որ մարզպետի աշխատակազմը զանազան պատճառաբանություններով մերժում է կարիքավոր բազմաթիվ քաղաքացիների դրամական օգնության դիմումները: Պետբյուջեից այս տարվա 3,5 ամսում դրամական աջակցություն է ստացել մոտ 120 հազար բնակիչ ունեցող Տավուշի մարզի ընդամենը 125 ընտանիք, որոնց տրված 6 միլիոն 345 հազար դրամը բազմապատիկ քիչ է նույն ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմին տրված պարգեւավճարների գումարից: Մարզպետի աշխատակազմն այժմ ունի 66 աշխատող, եթե համարենք, որ նրանք բոլորն էլ այս տարի պարգեւավճար են ստացել, ուրեմն՝ 66 պաշտոնյան երեքուկես ամսում ավելի քան 29 միլիոն դրամ պարգեւավճար են ստացել: Դա այն պարագայում, որ այդ պաշտոնյաները համեմատաբար բարձր աշխատավարձեր են ստանում: 2026թ.-ի պետբյուջեից մարզպետարանի պաշտոնյաների պարգեւատրման համար նախատեսված է 65 միլիոն 883 հազար 400 դրամ, դրա գրեթե կեսը՝ 29 միլիոն 155 հազար դրամ, անցած 3,5 ամսում ստացել են: Շտապում են պետբյուջեն քամել, քանի դեռ իշխանություն են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ

ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՆԵԹԱՆՅԱՀՈՒԻՆ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իսրայելի երկու նախկին վարչապետներ Նաֆթալի Բենեթն ու Յաիր Լապիդը հայտարարել են իրենց կուսակցությունների միավորման մասին: Ինչպես հայտնում է Bloomberg-ը, նոր քաղաքական ուժը կարող է առաջիկա ընտրություններում առաջ անցնել Բենիամին Նեթանյահուի «Լիկուդ» կուսակցությունից:

«Միասին» կոչվող կուսակցությունը կգլխավորի Բենեթը: Նա հայտնի է որպես հրեական բնակավայրերի նախկին պաշտպան ու կողմնակից, որն այժմ որոշակիորեն թեքվել է դեպի քաղաքական կենտրոն: Թեեւ 2022-ին Նեթանյահուից կրած պարտությունից հետո Բենեթը հեռացել էր քաղաքականությունից, սակայն, ըստ ամենշաբաթյա հարցումների, նա գործող վարչապետի ամենալուրջ մրցակիցն է:

Լապիդը կենտրոնամետ գործիչ է, որի հիմնական ընտրազանգվածը Թել Ավիվում է: Այժմ նա գլխավորում է ընդդիմությունը՝ իր «Եշ Աթիդ» կուսակցությամբ: Բենեթն ու Լապիդը նախկինում եւս միասին կառավարություն են ձեւավորել, որին հաջողվել է իշխանությունից հեռացնել Նեթանյահուին, սակայն այդ դաշինքը գոյատեւել է ընդամենը մեկ տարի եւ 2022-ին կրկին իր տեղը զիջել է նրան:

Bloomberg-ը նշում է, որ այդ ժամանակ Նեթանյահուն ձեւավորել է երկրի պատմության մեջ ամենածայրահեղ աջակողմյան եւ կրոնամետ կառավարությունը: Նա վարել է պոպուլիստական քաղաքականություն, որն ընդդիմախոսները որակել են որպես հասարակությունը պառակտող եւ հակաժողովրդավարական:

Բենեթի եւ Լապիդի համատեղ հայտարարության մեջ նշվում է, որ սա «Իսրայել պետության առողջացման առաջին քայլն է». «Եշ Աթիդ» եւ «Բենեթ 2026» ուժերը միավորվում են մեկ կուսակցության մեջ, որը կգլխավորի նախկին վարչապետ Նաֆթալի Բենեթը:

«Այս քայլով միավորվում է նաեւ «բարեփոխումների դաշինքը»՝ վերջ դնելով ներքին պայքարին: Սա թույլ կտա կենտրոնացնել բոլոր ջանքերը՝ առաջիկա ընտրություններում վճռական հաղթանակ տանելու եւ Իսրայելը դեպի անհրաժեշտ բարեփոխումներ տանելու համար»,- ասված է հայտարարության մեջ:

Նախկինում նրանք պայմանավորվել էին վարչապետի պաշտոնը զբաղեցնել հերթափոխով, սակայն նոր համաձայնագրով նման բան նախատեսված չէ:

Անցած հանգստյան օրերին անցկացված հարցումները ցույց են տվել, որ Բենեթն ու Նեթանյահուն գրեթե հավասար վարկանիշ ունեն: Եթե Բենեթի միավորներին գումարվեն նաեւ Լապիդի կանխատեսվող մանդատները, նրանց կուսակցությունը կդառնա խոշորագույնը խորհրդարանում, ինչն էլ հաջորդ կառավարությունը ձեւավորելու իրավունք կտա:

Ըստ հարցումների՝ ընդդիմադիր դաշինքը (առանց արաբական կուսակցությունների) կարող է ստանալ 60 կամ 61 տեղ՝ 120-ից, ինչը լիովին բավարար է իշխող կոալիցիա կազմելու համար:

ՄԱՐԶ

ԱՅՑԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայկ Ղալումյանը Տավուշի մարզպետ է նշանակվել 2021 թվականի ապրիլի 8-ին: Երկար ժամանակ մարզպետ Ղալումյանը մարզի համայնքներում քաղաքացիների ընդունելություն չէր կատարում: Տեղեկատվական բազում հարցումներ եմ արել մարզպետին, թե նա ինչու համայնքներում քաղաքացիների ընդունելություն չի անում: 2025թ.-ին մարզպետը որոշեց քաղաքացիների ընդունելություն կատարել, ամեն ամիս Տավուշի մարզի մի համայնքում՝ Բերդում, Նոյեմբերյանում, Իջեւանում եւ Դիլիջանում քաղաքացիներին ընդունել, լսել նրանց հուզող հարցերը, ըստ հնարավորի օգնել դրանց լուծմանը: Մարզպետարանը հրապարակեց մարզի համայնքներում քաղաքացիների ընդունելության օրերը: Սակայն ամիսներ անց մարզպետ Հ. Ղալումյանը դադարեցրեց համայնքներում քաղաքացիների ընդունելությունները: Ապրիլի 17-ին մարզպետին հարցում եմ արել. «2026թ. հունվար, փետրվար, մարտ ապրիլ ամիսներին ո՞ր օրերին մարզի ո՞ր համայնքներում եք Դուք քաղաքացիների ընդունելություն կատարել, որ ընդունելությանը քանի՞ քաղաքացի է մասնակցել»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «2026թ. հունվար, փետրվար, մարտ եւ ապրիլ ամիսներին ՀՀ Տավուշի մարզպետն այցելություն է կատարել մարզի 32 բնակավայրեր, որտեղ հանդիպել է քաղաքացիների հետ, քննարկել է նրանց հուզող հարցերը»:

Մարզպետը միտումնավոր խառնել է մարզի բնակավայրեր իր այցերը համայնքներում նախապես հայտարարված, քաղաքացիների ընդունելության հետ: Խառնել է, որովհետեւ այս տարի Տավուշի համայնքներում քաղաքացիների ընդունելություն չի արել:

ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ

Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը 2022թ. դեկտեմբերին է սկսվել, նորոգման աշխատանքները կատարել է «Արտդիանշին» ՍՊԸ-ն: Սուբվենցիոն ծրագրի արժեքը շուրջ 283 միլիոն դրամ է, գումարի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, մնացածը՝ պետական բյուջեի: Դիլիջանի մշակույթի պալատում տեղակայված է քաղաքային գրադարանը, որի հազարավոր գրքերը, պարկերի մեջ դարսված, գտնվում են մշակույթի պալատի առաջին հարկում: Ապրիլի 7-ին Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել Դիլիջանի մշակույթի պալատի նորոգման մասին: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Դիլիջան քաղաքի մշակույթի տան վերանորոգման շինարարական աշխատանքները կասեցվել են անբարեխիղճ շինարարի պատճառով:Հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նոր մրցույթ: Կա հաղթող կազմակերպություն:Փաստաթղթերի պատրաստ լինելուց հետո կհայտարարվի շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ: Այլ մանրամասների համար կարող եք դիմել համայնքնապետարան»:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

● *Ըստ վիճակագրության՝ ապրիլի 20-ից 27-ը հայտնաբերվել է չամրակապված վարելու 328 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՀԵՏՎՃԱՐ ԿՏՐԱՄԱԴՐԻ

Հաշվի առնելով ՀՀ Կենտրոնական բանկի 02.04.2026թ. որոշումը՝ վարկային ռիսկի հաշվարկում միկրո, փոքր եւ միջին կազմակերպությունների նկատմամբ պահանջների ռիսկի կշիռների նվազեցման վերաբերյալ, Յունիբանկը վերանայում եւ բարելավում է վարկավորման պայմանները:

«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ով սահմանված պահանջներին համապատասխանող բարեխիղճ բիզնես վարկառուներին Յունիբանկը կտրամադրի հետվճար՝ ՀՀ դրամով պարտավորությունների մնացորդի 1.2% չափով:

Փոքր եւ միջին ձեռնարկատիրության խթանումն ու աջակցությունը Յունիբանկի ռազմավարական առաջնահերթություններից է: Ձեռնարկությունները կարեւոր դեր ունեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում, եւ բանկը շարունակաբար ձգտում է իր հաճախորդներին առաջարկել վարկավորման ավելի շահավետ եւ հասանելի պայմաններ: *(Գ)*

ՀԱՄԵԼ ԵՆ 2.887 ՏՐԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ

Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) նոր զեկույցի համաձայն՝ 2025թ. համաշխարհային ռազմական ծախսերը հասել են 2.887 տրիլիոն դոլարի, ինչը 2.9%-ով ավելի է, քան 2024 թվականին: Ինստիտուտի փորձագետների տվյալներով՝ այս ծախսերը նվազել են Միացյալ Նահանգներում, բայց աճել են 14%-ով Եվրոպայում եւ 8.1%-ով Ասիայում եւ Օվկիանիայում: Ռազմական ծախսերի ամենամեծ ծավալ ունեցող երեք երկրները՝ Միացյալ Նահանգները, Չինաստանը եւ Ռուսաստանը, միասին ծախսել են 1.480 տրիլիոն դոլար, կամ համաշխարհային ընդհանուրի 51%-ը: Ռազմական ծախսերը աճել են 11-րդ տարին անընդմեջ: ՀՆԱ-ում դրանց բաժինը հասել է 2.5%-ի, ինչը ամենաբարձր մակարդակն է 2009 թվականից ի վեր: Չնայած տարեկան 2.9% աճի տեմպը զգալիորեն ցածր էր 2024 թվականի 9.7%-ից, այս դանդաղումը մեծապես բացատրվում է Միացյալ Նահանգներում այս ոլորտում ծախսերի անկմամբ, նշում են ինստիտուտի փորձագետները: Միացյալ Նահանգներից դուրս ընդհանուր ծախսերը 2025 թվականին աճել են 9.2%-ով: Այս ցուցանիշով 2025 թվականին առաջատար հնգյակում էին Միացյալ Նահանգները, Չինաստանը, Ռուսաստանը, Գերմանիան եւ Հնդկաստանը, որոնք միասին կազմել են համաշխարհային ռազմական ծախսերի 58%-ը:

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ԸՆՏՐՎԵԼ Է ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ակբա բանկի խորհուրդը Սոնա Իշխանյանին ընտրել է Ակբա բանկի խորհրդի նախագահի պաշտոնում:

Սոնա Իշխանյանն ունի ավելի քան 24 տարվա մասնագիտական փորձ ներքին աուդիտի, ձեռնարկությունների ռիսկերի կառավարման եւ ֆինանսական ծառայությունների ոլորտներում:

Իր մասնագիտական գործունեության ընթացքում 18 տարի աշխատել է ներքին աուդիտի եւ ռիսկերի կառավարման ոլորտում, որից 4 տարի Deloitte & Touche LLP (Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ) ընկերությունում: 13 տարի աշխատել է որպես աուդիտի հանձնաժողովների նախագահ եւ անդամ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի եւ Մոլդովայի ՊրոԿրեդիտ բանկերում: 2025 թվականի մայիսից Սոնա Իշխանյանն Ակբա բանկի խորհրդի անդամ է, եղել է բանկի Աուդիտի հանձնաժողովի նախագահը:

Մասնագիտական փորձառությունը ներառում է միջազգային ֆինանսական վերահսկողության եւ կորպորատիվ կառավարման ստանդարտների (SOX) համապատասխանեցումը, ներքին աուդիտի մեթոդաբանության մշակումը, ֆինանսական հաշվետվողականությունը, բիզնես գործընթացների գնահատումը եւ միջգործառնական միջազգային կառավարումը:

Սոնա Իշխանյանն ԱՄՆ Նեբրասկայի համալսարանում մագիստրոսի կոչում է ստացել բիզնեսի կառավարման ոլորտում, Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանի շրջանավարտ է:

Ակբա բանկը շարունակելու է իր գործունեությունը հաստատված ռազմավարական առաջնահերթություններով՝ միտված բանկի անընդհատ զարգացմանը:

Բանկի խորհուրդը շնորհակալություն է հայտնում խորհրդի նախկին նախագահ Ռաֆայել Սարգսյանին՝ բանկի կառավարման եւ զարգացման գործում ունեցած ներդրման համար:

Ակբա բանկը Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից է, երկրի գյուղոլորտի ֆինանսավորման բացարձակ առաջատարը: 2021 թվականին իրականացված բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո Ակբա բանկն ունի շուրջ 5000 բաժնետեր: Թվային նորագույն լուծումների ներդրման, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բանկն անդադար զարգացնում է տրամադրվող ֆինանսական ծառայությունների քանակն ու որակը: Ակբան ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, ունի 66 մասնաճյուղ, համարվում է երկրի եւ ֆինանսական համակարգի խոշոր գործատուներից մեկը:

Ակբա բանկը վերահսկվում է
ՀՀ ԿԲ կողմից

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Ջեթ ընդ էյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00859794, իրավ.հասցե՝ ՀՀ, ք.Երեւան, Արաբկիր, Գրիբոյեդովի փ. 25/27շ.) պաշտոնապես հայտնում է, որ 2026թ. ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային ձեւակերպումների համար նախատեսված կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝

ՀՀ, Երեւան
«Ջեթ ընդ էյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Մաքսային ձեւակերպումների համար
Для таможенных сделок
For custom’s formalities
00859794

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ. ապրիլի 17-ից:

Հայտարարվում է, որ 2026թ. ապրիլի 17-ին կորցրած վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Ջեթ ընդ էյ» ՍՊԸ
Ամսաթիվ՝22.04.2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Իսոլա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00877141, իրավ.հասցե՝ ՀՀ, ք.Երեւան, Արաբկիր, Գրիբոյեդովի փ. 25/27շ.) պաշտոնապես հայտնում է, որ 2026թ. ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային ձեւակերպումների համար նախատեսված կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝

ՀՀ, Երեւան
«Իսոլա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Մաքսային ձեւակերպումների համար
Для таможенных сделок
00877141

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ. ապրիլի 17-ից:

Հայտարարվում է, որ 2026թ. ապրիլի 17-ին կորցրած վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Իսոլա» ՍՊԸ
Ամսաթիվ՝22.04.2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Լիտոկոլ Ամ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00651425, իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երեւան, Արաբկիր, Թբիլիսյան խճ. 25/7շ.) պաշտոնապես հայտնում է, որ 2026թ. ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային ձեւակերպումների համար նախատեսված կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝

ՀՀ, Երեւան
«Լիտոկոլ Ամ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Մաքսային ձեւակերպումների համար
Для таможенных сделок
00651425

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ. ապրիլի 17-ից:

Հայտարարվում է, որ 2026թ. ապրիլի 17-ին կորցրած վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Լիտոկոլ Ամ Կո» ՍՊԸ
Ամսաթիվ՝22.04.2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Մառանիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00855055, իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երեւան, Արաբկիր, Գրիբոյեդովի փ. 25/27շ.) պաշտոնապես հայտնում է, որ 2026թ. ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային ձեւակերպումների համար նախատեսված կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝

ՀՀ, Երեւան
«Մառանիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Մաքսային ձեւակերպումների համար
Для таможенных сделок
00855055

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ. ապրիլի 17-ից:

Հայտարարվում է, որ 2026թ. ապրիլի 17-ին կորցրած վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Մառանիկ» ՍՊԸ
Ամսաթիվ՝22.04.2026թ.

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԵԶԱԿԻ

ԳՐԱՎԵԼ Է ԳԱԼԱ-ԵՐԵԿՈՒՅԹԸ ԻՐ 101 ԿԱՐԱՏԱՆՈՑ ՔԱՐՈՎ

Հնդկաստանի ամենահարուստ մարդու կինը՝ Նիտա Ամբանին, մասնակցել է «Ջազ Լինքոլն կենտրոնում» կայացած գալա-երեկոյին եւ անմիջապես ուշադրություն է գրավել իր զարդերի ընտրությամբ: Նրա կերպարի կենտրոնական զարդը հսկայական՝ 101 կարատանոց ադամանդն էր՝ շագանակագույն երանգի հազվագյուտ տանձաձեւ քար՝ հին հանքի վարդագույն մշակմամբ:

Այս թանկարժեք իրը ոչ միայն տպավորիչ է չափսերով, այլեւ կապված է Նիզամ դինաստիայի պատմական ժառանգության հետ, որը Հնդկաստանի պատմության ամենահարուստ եւ ամենաազդեցիկներից մեկն է:

Ոսկերիչները նման զարդերն անվանում են «չվերարտադրվող». դա ոչ միայն զարդերի կտոր է, այլեւ հավաքորդական իր՝ պատմության, հազվագյուտության եւ եզակի գեղարվեստական տեսլականի խաչմերուկում:

Քարի առանձնահատուկ արժեքը պայմանավորված է իր ծագմամբ. այն կապված է Հայդարաբադի Նիզամ դինաստիայի հետ, որը Հնդկաստանի պատմության ամենահարուստ իշխող ընտանիքներից մեկն է: Դարերի ընթացքում նիզամները կուտակել են զարդերի եզակի հավաքածու, որոնցից շատերն այժմ համարվում են ազգային եւ մշակութային ժառանգություն:

«Ես կրում եմ զարդ, որը արտացոլում է Հնդկաստանի հարուստ ժառանգությունը»,-նշել է Ամբանին՝ ընդգծելով իր կերպարի պատմական նշանակությունը:

Կենտրոնական ադամանդը բարդ կոմպոզիցիայի մի մասն էր՝ Բասրայի ամենահազվագյուտ մարգարիտներից վեց թելից բաղկացած վզնոց: Այս մարգարիտները արդյունահանվում են Պարսից ծոցում եւ ձեւավորվում են միայն մեկ տեսակի խեցգետնից, ինչը դրանք դարձնում է չափազանց հազվագյուտ եւ արժեքավոր: Անցյալում այս մարգարիտները նախընտրելի էին թագավորական արքունիքի, այդ թվում՝ նիզամների կողմից:

Տեսքը կառուցվել է այս զարդերի շեշտադրման շուրջ: Ամբանին այն լրացրել է մարգարտե կախազարդ ականջօղերով եւ վարդագույն տանձաձեւ ադամանդով մատանիով, որը շրջապատված էր պավե քարերի ցրվածությամբ՝ ուժեղացնելով բազմաշերտ շքեղության էֆեկտը:

Հագուստը ոչ պակաս շքեղ էր: Նա ընտրել էր ձեռագործ սարի՝ նուրբ պաստելային կակաչի նախշերով, որը ստեղծվել է իր սեփական նախագծի՝ «Սվադեշի» շրջանակներում, որն աջակցում է հնդիկ արհեստավորներին: Կտորի ստեղծման համար պահանջվել է մոտ հինգ ամիս: Նա կերպարը լրացրել է հայտնի դիզայներ Մանիշ Մալհոտրայի բլուզով:

Երեկոն ոչ միայն նորաձեւ էր, այլեւ նշանակալից բիզնեսի եւ լրատվամիջոցների տեսանկյունից. միջոցառման ժամանակ Reliance Foundation-ի հիմնադիր եւ նախագահ Նիտա Ամբանին հայտարարեց TIME100 Next India-ի՝ հեղինակավոր վարկանիշային աղյուսակի տարածաշրջանային տարբերակի մեկնարկի մասին:

ՄԱՐԶԱԿԱՆ

15 ՏԱՐԻ ՄԵԾ ՍՊՈՐՏՈՒՄ

Բաթումիում ավարտին մոտեցող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Տաթեւ Հակոբյանն այսօր ավարտեց կարիերան:

Եվրոպայի արծաթե ու բրոնզե մեդալակիրն իր վերջին մոտեցումից հետո հանեց մարզակոշիկներն ու հրաժեշտ տվեց մարզասերներին:

Պատվոհարթակից իջնելուց հետո լրագրողների հետ զրույցում նա հուզված էր ու այսպես ամփոփեց իր մարզական կարիերան:

«Մոտ 15 տարի է մեծ սպորտում եմ ու ճիշտ գտա թերթել այս էջը: Այս տարիներն ինձ կոփեցին ու շատ ուժեղ գծեր տվեցին: Կարող եմ ասել, որ այսպիսի բնավորությունս հենց ծանրամարտի շնորհիվ է: Հիշողություններ եմ ձեռք բերել ու զարգացրել կամքիս ուժը, ինչպես նաեւ առաջ շարժվելու ընդունակությունը:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել առաջին հերթին այն մարդկանց, ովքեր այս տարիներին իմ կողքին են եղել, իսկ մեր հավաքականին հաջողություն եմ մաղթում:

Իմ վերջին ԵԱ-ում հանգիստ էի, որեւէ բան ինձ չխանգարեց, մարզումների ժամանակ ավելի շատ կիլոգրամներ էի բարձրացրել, բայց կարիերաս ավարտելու միտքն ինձ մի քիչ հուզմունք էր պատճառել: Ցավոք, սպորտից չհեռացա այնպես, ինչպես կցանկանայի, բայց էլի գոհ եմ:

Նախորդ տարի ամուսնացել եմ ու ժամանակն է ընտանիքիս կողքին լինելու: Արդեն ապագայիս հետ կապված նախնական ծրագրեր ունեմ եւ սպորտից շատ հեռու չեմ լինելու»:

ՊԵՏՔ Է ԱՐԺԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԵԼ ՄՐՑԱԿՑԻՆ

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» ռումինացի գլխավոր մարզիչ Կրիստիան Կիվուն մեկնաբանել է «Տորինոյի» հետ ոչ ոքի արդյունքը (2:2) Իտալիայի առաջնության 34-րդ տուրի արտագնա խաղում, որի ընթացում «Ինտերը» հաղթում էր 2:0 հաշվով:

«Պետք է արժանին մատուցել մրցակցին: Չդիմացանք նրանց ճնշմանը, իսկ մրցակիցը մինչեւ վերջին պահը հավատում էր իր ուժերին, դրսեւորեց կամք եւ բարդացրեց մեր խնդիրը:

Հնարավոր է՝ ամեն ինչ կարող էր ավելի վատ ավարտվել մեզ համար: Մենք փորձում էինք հաղթահարել դժվարությունները, փոխարինման դուրս եկած ֆուտբոլիստներն էլ արեցին հնարավոր ամեն ինչ:

Մենք հանգիստ ենք եւ ցանկանում ենք իրականացնել մեր երազանքն ինչքան հնարավոր է շուտ»,- Կիվուի խոսքը մեջբերում է Football Italia-ն:

«Ինտերը» 79 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը եւ 10 միավոր առաջ է երկրորդ տեղում գտնվող չեմպիոն «Նապոլիից»:

ԼՈՒՐԵՐ

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇ

Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականը Բաթումիում ավարտին մոտեցող Եվրոպայի առաջնությունում նվաճել է երկամարտի 2 մեդալ: Ալեքսանդրա Գրիգորյանը կանգնել է պատվոհարթակի 2-րդ աստիճանին, իսկ Էմմա Պողոսյանը՝ Եվրոպայի չեմպիոն հռչակվել:

Կանանց ընտրանու գլխավոր մարզիչ Արտաշես Ներսիսյանն ամփոփել է առաջնության արդյունքները:

«Սա այս տարվա մեր առաջին մրցաշարն էր ու կնշեմ, որ դեռ աշխատելու շատ տեղ ունենք: Եթե չլիներ պոկում վարժությունում Աննա Ամրոյանի անհաջողությունը, թիմային հաշվարկում կարող էինք նախորդ տարվա պես առաջինը լինել:

ԵԱ-ում ունեցանք 7 մեդալ՝ 3 ոսկի, 2-ական արծաթ ու բրոնզ, իսկ թիմային հաշվարկում 3-րդն ենք: Մեր աշխատանքը կարող եմ բավարարից մի քիչ ավելին համարել: Ցավոք, Ալեքսանդրայի մեդալը կարող էր մեկ հարկ բարձր լինել, Լիանա Գյուրջյանն այդքան էլ լավ հանդես չեկավ, իսկ Աննայի 0-ն ամեն ինչ կոտրեց:

Ալեքսանդրան պոկում վարժությունում մի քիչ կաղում է, մեր մարզչական ողջ թիմը մտածում է ինչ անել, որ նա մի քիչ բարելավի իր արդյունքը: Հրումում համարյա վարպետ է, կաշխատենք անպայման գտնել նրա բացթողումը, այլապես մեծ ցուցանիշներ սպասելն անիրական կլինի:

Էմման խոստումնալից մարզուհի է ու հիմա վերելքի վրա է, եթե արգելակումներ չունենա, մինչեւ տարեվերջ կբարելավի իր կիլոգրամները եւ հաջորդ տարի լավ արդյունքներ կունենանք: Մեծ վստահություն ունեմ, որ կկարողանանք Օլիմպիական վարկանիշ ապահովել»:

ԿԱՐՈՂԱՑԱՎ ՈՒՐԱԽԱՑՆԵԼ

Գարիկ Կարապետյանը Բաթումիում ավարտին մոտեցող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում իր 3-րդ ոսկե մեդալն է նվաճել:

Լրագրողների հետ զրույցում նա խոստովանել է, որ անչափ ուրախ է իր նվաճման համար:

«Ամեն փոքր մեդալն ինձ համար մեծ կարեւորություն ունի՝ սկսած Հայաստանի առաջնության մեդալից մինչեւ Աշխարհի առաջնությանը:

Այս չեմպիոնությունն ինձ համար կարեւոր է նրանով, որ այս ծանր փուլում կարողացա դրոշ բարձրացնել եւ ուրախություն պարգեւել մեր հայ ազգին, հարազատներին, բարեկամներին ու ընկերներին:

Պոկում վարժությունից հետո 3-րդն էի, բայց գիտեի իմ հնարավորություններն ու այն, որ մրցակիցներս թույլ են հրումում:

Եվրոպայի 3 չեմպիոնություններից ամենաշատը տպավորվել է 2023 թվականին Երեւանում նվաճած ոսկե մեդալը: Նախ առաջին անգամ էի հաղթում, բացի այդ էլ սեփական երկրում չեմպիոն դարձա: Ամենամեծ զգացողություններս այնտեղ եմ ապրել, իսկ այսօր դրանք եռապատկվել են»:



● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 1-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Պիգմալիոնի էֆեկտը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձեռք բերել էլեկտրոնային թվային ստորագրություն:

Մարինե Սիմոնյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Նույնականացման քարտի (eID) էլ. թվային ստորագրության ակտիվացման համար անհրաժեշտ է՝

Նույնականացման քարտ (PIN եւ PUK ծածկագրերով)

Նույնականացման քարտ ընթերցող սարք

www.ekeng.am կայքից տեղադրել անհրաժեշտ ծրագրերը

Ակտիվացնել նույնականացման քարտի PIN եւ PUK կոդերը

Կատարել տարեկան սպասարկման վճարը

Գրանցվել ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի Անձնական էջում

Կիրառել էլ. թվային ստորագրությունը ՊԵԿ եւ մի շարք այլ էլեկտրոնային համակարգերում

Ուշադրություն: Եթե ստացել եք նույնականացման քարտը մինչեւ 15.02.2023թ. եւ չեք պահպանել PIN/PUK ծածկագրերով ծրարը, ապա կարող եք ակտիվացնել Բջջային նույնականացման քարտի (mID) էլ. թվային ստորագրությունը:

Բջջային նույնականացման քարտի (mID) էլ. թվային ստորագրության ակտիվացման համար անհրաժեշտ է՝

- Ձեռք բերել նույնականացման քարտ անձնագրային տեսչությունից
- Մոտենալ նախընտրած բջջային օպերատորին նույնականացման քարտով
- Բջջային օպերատորի կողմից ստանալ կամ վերջինիս օգնությամբ ստեղծել PIN կոդ: PIN կոդը պետք է բաղկացած լինի 6 նիշից
- Կատարել տարեկան սպասարկման վճարը
- Գրանցվել ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի Անձնական էջում
- Կիրառել էլ. թվային ստորագրությունը ՊԵԿ եւ մի շարք այլ էլեկտրոնային համակարգերում

Էլ. թվային ստորագրության ARX Cosign ծառայություն

Ծառայությունը տրամադրվում է բացառապես օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր կարող են դիմել ԷԿԵՆԳ ընկերություն՝ cosign@ekeng.am էլ. փոստին ներկայացնելով իրենց փաստաթղթերը:

01.02.2026թ.-ից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը եւ ստորագրության սպասարկման ծառայությունը տրամադրվելու է 1 տարի ժամկետով՝ գումարը 10.000 ՀՀ դրամ:

Անհրաժեշտ փաստաթղթեր՝

Կացության քարտ

Հանրային ծառայության համարանիշի տեղեկանք

Վճարման անդորրագիր

ՀՀ ՊԵԿ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձեռք բերել ԵՊՀ գրադարանի տոմս:

Դավիթ Անտոնյան, 21 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրադարանից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ միասնական տոմս, որը ուսանողներին տրամադրում է ֆակուլտետը: Այն ե՛ւ ուսանողական տոմս է, ե՛ւ գրադարանի (ընթերցողական), որը տրվում է որոշակի ժամկետով՝ ելնելով ընթերցողի համալսարանական կարգավիճակից: Ըստ այդմ, միասնական տոմսը տրվում է՝

բակալավրիատի ուսանողներին չորս տարի ժամկետով,

մագիստրատուրայի ուսանողներին երկու տարի ժամկետով,

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին՝ նրանց հետ կնքված պայմանագրի ժամկետին համապատասխան:

Երեւանի պետական համալսարան

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Դավիթաշենի 1-ին թաղամասում դիտահորերի խցանման պատճառով կեղտաջրերից նկուղում գարշահոտ է տարածվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____

Ազգանուն՝ _____

Առաքման հասցե՝ _____

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 2 + 2 + 9 + 13
	Կոտայքի լեռներ	- 1 + 3 + 9 + 12
	Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +13 + 16
	Գեղարքունիք	0 + 4 + 8 + 12
	Լոռի	+ 1 + 5 + 10 + 14
	Տավուշ	+ 2 + 5 +10 + 13
	Արագածոտնի լեռներ	- 1 + 2 + 8 + 11
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 8 +12 + 17

	Արարատ	+ 6 + 10 +15 + 18
	Արմավիր	+ 6 + 10 +17 + 20
	Վայոց ձորի լեռներ	- 1 + 3 +10 + 14
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 11 +16 + 20
	Սյունիքի լեռներ	- 1 + 3 + 6 + 9
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 7 +11 + 14
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +16 + 19
	Երեւան	+ 7 + 9 +16 +18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*